

Դարեհու ընթացքին բազում ամանորներ եկած ու անցած են մեր ազգային տառապանքներու և բաղձանքներու գծով: Մեր մարտիրոսագրութիւններն ու հատնումները միշտ ալ անկարող եղած են փշրել մեր հաւատքը, տկարացնել ազատ օրեր ունենալու մեր ճիգերը ու առ այդ պայքարելու մեր ընդունակութիւնները: Մեր բաղձանքներն ու երազները ծնած ու անած են մեր ազգային ուժականութեան ներքին անսպառ կենսունակութիւնէն, մեր հոգեկան խառնուածքէն: Ծնուցիչ այդ հոգեկանութիւնը մեր էութիւնն է, այդ եղած է մեր պատմա-անհատականութեան նրկարգիւրը, մեր գոյութեան իրաւունքին անվերածելի պայմանը: Ազգային ոգին սլացքն է «Ազգիս Հայոց ազատութիւն»ը զոր հայ եկեղեցին դարերու ընդմէջէն կը հայցէ այնքան օրոտարուի և խոնարհ պաղատանքով մը: Մեր պատմական առաքելութիւնը խորքին և յառումներուն մէջ քաղաքակրթական է եղած, որուն շարժումներուն նախապայմանը միշտ ալ նկատուած է ազգային ինքնիշխան գոյավիճակը, բարձրագոյն վերելքներու սլացքին ազատութիւնը: Այդ եղած է մեր նախահայրերուն հոգեկան շարժումներուն ներքին բարացուցական ամենաուժեղ արտայայտութիւնը, այդ եղած է նաև մեր օրերու ձգտումին իսկութիւնը:

Ամանորները եկած ու անցած են նոր յուսադրումներով յաճախ ենթարկելու մեզ ազգային հունով նոր յուսախաբութիւններու և սակայն այդ հոգեվիճակի ընթացքին իսկ պարտաւորական հոգեբանութիւնը չէ որ ղեկավարած է մեր էութիւնը: Յաճախ նուաճուած ենք ֆիզիքապէս բայց չենք պարտուած հոգեպէս: Հակագործել և միշտ հակագործել եղած է մեր ներքին ուժականութեան ընդհանուր վարքագիծը: Մեր պատմական տարեգրութիւններուն փաստական հաւատումն է որ կուտայ մեզի այդ եզրակացութիւնը:

Նախորդ համաշխարհային պատերազմին վախճանին պաշտօնական կամ անպաշտօն որոշ խօստումներու հաստիքներով յուսադրուեցանք քաղաքական խանդավառող հեռապատկերներով: Բայց քաղաքական շրջանակները, թերեւս ակամայ, գործեցին պատմական մեծագոյն անարդարութիւնը լքելով կէս ճամբուն վրայ ազգ մը որ իր կարելի ուժերուն ամբողջութիւնը արամագրած էր անոնց ազատագրող պատերազմին յաջողութեան համար: Մեր այդ անվերապահ զոհողութեան համար պատմութեան ամենամեծ եղեռնին զօհերը դարձանք, և եթէ մեր մեծագոյն բարեբախտ փրկարար խնամակալութիւնը չհասնէր օգնութեան մենք պատմութեան մոռցուած ազգերու շարքին մէջ միայն պիտի դասուէինք: Ոչ միայն մենք, այլ քաղաքակրթ աշխարհը պատրանքի ենթարկուեցաւ դիւանագիտական, տնտեսական և այլ իւրայատուկ շահեր ապահովելու ձգտող ին դեւին փրկապետութեամբը, և այսպէս մարդկութիւնը առաջնորդուեցաւ քառային գոյավիճակի մը: Մենք անիրաւուեցանք նախորդ պատերազմի վախճանի հաշուեյարդարի ընթացքին: Խոստումնազանց այդ անիրաւութիւնը ջընջել պատմութեան էջերէն անկարելի է, և ոչ ալ մոռացումը անխոցելի բարոյական պարտադրած մը կարող է աշակովել բոլոր պատասխանատուներուն: Արձանագրուած այդ անիրաւութեան — պատճառներուն անդրադարձումի պէտք չենք տեսներ — դարմանումը հնարաւոր է իրագործել, հոչակուած մարդկային իրաւանց սկզբունքով, թիւ Բ. համաշխարհային պատերազմի վերջնական հաշուեյարդարի այս օրերուն: Պիտի դարմանուին մօտաւոր անցեալի և ներկայ օրերուն կատարուած բոլոր անիրաւութիւնները: Մենք քաղաքակրթ մարդկութեան հետ կը հաւատանք թէ կը օգտուինք:

Թիւ Ա. համաշխարհային պատերազմին վախճանին մեզի տուած ծանրակշիռ յուսախաբութեան մէջ մենք տեսանք միայն ձախողութեան դժբախտ հանգրուան մը և ոչ վերջնական եզրափակումը մեր քաղաքական դատին: Այս տեսակէտը մեզ առաջնորդող ըմբռնումը եղաւ և հայ ազգային քաղաքական միտքին շարժումները ղեկավարուեցան այդ մեկնակէտէն, օպտաւիզմով դէպքերու յարմարագոյն դասաւորումին:

Հայ դատին այդ անյաջողութեան ազդակները չափազանց բարդ և բազմատեսակ էին այդ օրերուն: Մեր դատին ներքին տուեալները և արտաքին պայմաններն ու գործօնները, հակառակ իրենց մոլորեցնող արտերեւոյթին և իրենց թելադրական խանդավառող հեռանկարին, չունէին այն կենսական երաշխաւորութիւնները իրենց մէջ որով կը լուծուին առ հասարակ ազգերու քաղաքական դատերը: Այդ օրերուն մեր մանկունակ խանդավառութեամբ տարուեցանք յուսադրուիլ թէ դարձերու մեր երազը իրականացած է արդէն: Այդ բոլորը և ուրիշ պարագաներ կը բնորոշէին մեր քաղաքական բաղձանքներուն իրագործման երկբայելի կարելիութեան էութիւնը: Քաղաքական ուժանդիւս, ինչպէս պիտի բանաձևէին քաղաքա-ընկերային գիտութեանց ուսանողները:

Այս ամանորը, սակայն, մեր առջեւ կը թուի թէ կը պարզէ մեր դատին տարբեր բնանկարը, որ աւելի իրապաշտ տարրերով ուժեղացուած ենթահող մը ունի. և այս՝ թէ՛ մեր ազգային հունին մէջ իրագործուած և թէ՛ արտաքին գործօններով յուսադրուած: Մեր քաղաքական կեանքէ դուրս անուժեան պատմական բոլոր շարժումներուն մէջ մենք չենք ունեցած աւելի նպաստաւոր դարձուածք քան այսօր: Չենք ունեցած մեր քաղաքական դատը պաշտպանող պետական գործօն մը որուն կարենայինք վրստանիլ թէ իրապէս անոր յաջողութիւնը իր անմիջական շահերուն մաս պիտի նկատէր: Այսօր այդ պարագան իրողական փոստ մըն է: Մեր դատի պաշտպանութեան նախորդ դիւանագիտական ամբողջ ճիգերուն մէջ կը պակսէր այդ գործօնը, թերեւս հակառակ համակիր բոլոր դիւանագիտական շրջանակներու բարեացակամութեան՝ այդ ազդակին չգոյութիւնը ձախողեցուց անոր ամբողջական յաջողութիւնը, ելլա մանաւանդ արտուած և մասամբ բնաջնջուած ժողովուրդի մը դատն էր, որ կապուած էր մանաւանդ հակամարտ շահերու սայլին: Համանման ազդեցութիւններու պէտք է վերագրել առաւելագէտ մեր դատին անյաջողութեան պատճառական էութիւնը:

Սակայն այսօր բոլոր նախատուեալներէն կը թուի թէ պէտք է առաջնորդուինք լուսատեօութեամբ: Այնու շտ իրաւազրկուած սոսկական հայ մարդու դատողութեամբ կ'առարկայսցնենք այդ լուսատեօ հեռանկարը, առանց մտնել փորձելու քաղաքա-տնտեսական հակամարտ շահերու և բարդ նկատումներու ոչ որոններուն մէջ, Այս անգամ աւելի քան յուսադրուած պէտք է ըլլալ թէ վերջագէտ մեր տառապանքին վերջաւորութիւնը հեռու չէ: Այդպէս պէտք է յուսադրուիլ այն ճիգերէն որոնք արամագրուած են տալու յոգնած մարդկութեան արդար խաղաղութեան ժամանակոյրջաններ, դարմանելով տնցեալի բոլոր անիրաւութիւնները և կերտելով մարդկային թեւական երջանկութիւնը: Եւ մարդկային ընկերութեան մէկ մասնիկը՝ մենք ալ իբր ազգային միաւոր կ'ակնկալենք որ օպտուած երջանկութեան նոր արշալոյսէն՝ ողորդին մեր հոգիներն ու հայրենիքի ամոյսցած և իր հարազատ զաւակներէն զրկուած հողամասերը:

Պ. Յ. ՏԵՓՈՅԵԱՆ

(\*) «ԱՐՄԻ».— Մեր կադանգի թիւին համար գրի առնուած այս յօդուածը ուս հասած ըլլալով մեր ձեռքը, վերապահեցիմք այսօրուան թիւին: